




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ МУЗЕЙ АРМЕНИИ

3142




ԿԱՏԱԼՈԳ
ՎԱՐԴԳԵՍ
ՈՒՐԵՆՅԱՆԻ
ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ

ԽԱՀՎԱՆ ՏԱՄՆԱԽՅԱԿԻ ԱՌԹԻՎ

1860~1921

КАТАЛОГ
ПОСМЕРТНОЙ ВЫСТАВКИ
В. Я. СУРЕНЬЯНЦА

ՅԵՐԵՎԱՆ • 1931 • ՋՐԻՎԱՆԻ



75(47.925)
4-97

ԿԱՏԱԼՈԳ
ՎԱՐԴԳԵՍ
ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ
ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ

ՄԱՀՎԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

1860-1921

1007
31042
1799

1931



ՎԱՐԳԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑ

(1860—1921)

Վ. Սուրենյանցի մահվան տասնամյակի առթիվ Հայաստանի Պետական Թանգարանի կազմակերպած ցուցահանդեսը հետապնդում է վոչ միայն նման դեպքերում սովորական նպատակին — նկարչի գործնեությունը ամփոփումը տալուն, այլ և Սուրենյանցի նկատմամբ ուրույն նշանակություն էլ և ստանում, վորովհետև առաջին անգամն է, վոր բավականին լրիվ կերպով ծանոթացնում է նկարչի ստեղծագործությունը, վորը, ինչպես իրա կենդանությունը որով, այնպես էլ մահից հետո, պատշաճ կերպով դրսևորված չի չեղել, Հավաքված և այս ցուցահանդեսում դրված գործերը, իհարկե, դեռևս ամբողջովին չեն սպառում Սուրենյանցի ստեղծագործությունները, վորովհետև բացակայում են նրա մի շարք խոշոր արտադրությունները, վորոնց կամ ուր լինելն է անհայտ, կամ չի հասցվել ստանալ ցուցահանդեսում դնելու համար: Սակայն իր այդ բացերով հանդերձ, կարծում ենք, վոր Սուրենյանցի նկարչի բնորոշ հատկանիշները ներկա ցուցահանդեսով տրտահայտված են: Նրա մահվանից անցած այս տասը տարին բավական ժամանակամիջոց է Սուրենյանցի գնահատականը պատմական վորոշ հեռանկարներով լուսաբանելու համար: Իսկ չեթե նկատի ունենանք, վոր այդ տասնամյակը վերաբերում է մեր հեղափոխական եպոսային, վորտեղ ամեն մի տարին տասնամյակի նշանակություն ունի, այդ դեպքում նման վերաբերմունքն էլ ավելի մեծ նշանակություն կստանա: Այդ պատմական մոտեցումով Սուրենյանցը հանդիսանում է նախ և առաջ իբրև մի նկարիչ, վորը դուրս

ե ֆնում ալն հիմնական գեղարվեստական ուղղութիւններէր, վոր գոյութիւն ունեյին 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի լեւորոպական և ռուսական գեղարվեստի մեջ, և վորոնց ժամանակակից եր: Իսկ ալն գեղա-նկարչական և ֆորմալ խնդիրները, վոր առաջադրում և լուծում եր նրա ժամանակի գեղարվեստը, անցան նրա մոտով և նրա գործերում չարժե չի գեղանկարչութիւն իբրև այդպիսին վորոնել, վորովհետև նա իսկապես գեկորատիվալին կարգի նկարիչ եր, այլ վոչ թե գեղանկարչական կարգի Ալն հաս-գամանքը, վոր նա պատկանում եր «Պերեդվիժնիկ»-ների միութեանը, վորոնց պատկերահանդեսներում ցուցադրվում եր նա, միայն ձևական եր, վորովհետև նրանց հետ վոչ մի առնչութիւն չունեի, ինչպես և առհասարակ նրա վերաբեր-մունքը ռուսական շկոլային, հակառակ մյուս հայ նկարիչ-ներէի, վորոնք վորոշ տեղ ելին գրավել այնտեղ (Սարգան, Յակոբով, Ալաշալով): Նրան չի կարելի հայ նկարիչ-ել համարել այն իմաստով, թե նա պատկանում ե հայ նկարչութեանը, քանի վոր ալն ժամանակվա հայ իրա-կանութիւնը նախադրեալներ չեր տալիս հայ նկարչութեան գոյութեան համար: Բայց մասնավորապես, և համեմայն դե-պքս ավելի, քան վորեւ մեկը այն ժամանակվա հայ նկարիչ-ներէից, Սուրենյանցը արտացոլել ե իր ժամանակի հայ բուր-ժուական և մանր-բուրժուական միջավայրում տիրող արա-մադրութիւններն ու թեմաները, թեև, ինչպես կտեսնենք վարը, թեման իրա ստեղծագործութիւնների մեջ իսկապես յերկրորդական նշանակութիւն ունեի: Նրա համար վոչ թե նպատակ եր, այլ շարժառիթ, և Սուրենյանցի նկարների մեջ ծանրութեան կենտրոնը որնամենտալ — գեկորատիվ մոտիվ-ների գերիշխող տեղ տալն ե: Նրա աշխատութիւններից աչնպիսիները, ինչպիսին ե «Պղծված սրբավայրը» (№ 17) կամ թե թեկուզ փախստականների կյանքից վերցրած նրա նը-կարների սերիան (№ 83 — 115), կարող են այդ բանի շատ պարզ որինակը ծառայել: Մանավանդ ուշագրավ ե առաջին նկարը, վոր ներշնչված ե Թուրքաց Հայաստանում 1892-1893

թվականներին տեղի ունեցած անցքերով: Դուք դմալվում եք խաչ—քարի փորագրութիւնների պատկերացման նրբու-թեամբ, պատի վրա յեղած պատկերի պատկերացման թեթե-ճշտութեամբ: Զեր ուշադրութիւնը բեմովում ե թափթիված գրքերի վրա, ապշեցնում ե մանրամասնութիւնների կատար-ման զարմանալի խնամքը: Սակայն դուք չեք տեսնում և չեք գգում այդ տրագեդիալի ամենապլխավոր բանը, վոր տե-ղի չե ունեցել նկարում պատկերացրած մոմենտից առաջ: Միևնույնը մենք կարող ենք նկատել Սուրենյանցի մյուս բոլոր գործերում: «Վանեցի փախստականներ», շարքի մեջ նկարիչն իր ուշադրութիւնը դարձրել և գլխավորապես աղ-գապրական մանրամասնութիւնների վրա — հագուստը, գլխա-սաքը: Յեւ, չեթե ճիշտ հայտնի չլինել նրանց նկարելու տեղն ու ժամանակը (Ելմիածին, 1915 — 16 թվականների ձմեռը), հազիվ թե կարելի կլինել գլխի ընկնել, վոր մեր առաջ իմպերիալիստական պատերազմի զոհերն են, վորոնք սովից ու տիֆից հազարներով մեռնում եյին Ելմիածնի շրջակայքում:

Սուրենյանցի մի շարք պատմական նկարներում (նը-րանցից պատկերասրահում ցուցադրված են «Կին ասպետը» № 78, «Զարել թագուհու թագադրութիւնը» № 77, «Կա-նանց լեկը լեկեղեցուց Անիում» № 75), անկասկած արդեւնք են ալն հետաքրքրութեան, վոր հայ բուրժուական ինտելի-գենցիայի շրջանում կար դեպի պատմական անցյալը: Բայց չնայած նրան, վոր պատմական և ժանրային թեմաները գե-բաղշող տեղ են բռնում նրա գործերի մեջ (վերջինս գըլ-խավորապես Արեւելի կյանքից), այնուամենայնիվ Սուրեն-յանցը, իսկապես ասած, վոչ պատմական նկարիչ ե և վոչ ել՝ ժանրիստ: Հազիվ նշմարելի մանրամասնութիւնները տա-լու մեջ, առերկանների պատկերացման մեջ և կայանում նկարչի իսկական շնորհքն ու վարպետութիւնը, վորը կար-միր թելի նման անցնում ե նրա բոլոր ստեղծագործութիւն-ների միջից, սկսած ամենանախնականից, վերջացրած կյան-քի վերջին տարիների գործերով: Ամեն տեղ մենք տեսնում

ենք դեպի դարդանկարչական նախշահուս մոտիվներն ունեցած բուռն սիրտ գերիշխումը, վորի չհետևում հաճախ չէր երևում բուռն պատկերը:

Նկարիչն ինքն ել եր ըմբռնում իր գործի այդ առանձնահատուկ կողմը, զրուցի ժամանակ արտահայտելով հետևյալը. «Իմ ձեռքի տակից ամեն ինչ դուրս ե գալիս չափազանց հղկված, մաքուր և կոկված բոլոր մասերում: Դա թերութունն է, վորովհետև նկարը պետք ե արտահայտել կյանքն աշխատ, ինչպես վոր նա ներկայանում ե մեր աչքին. Անշուշտ, քանի վոր դուք զննում եք մարդու դեմքը, չեք կարող տեսնել նրա հագուստի բոլոր մանրամասնությունները, նրա կոշիկի վրայի կարկատանները, կամ նրա անդրավարտիկի կարերը: Այս չերկրորդական առարկաները, վորոնք չեն գտնվում ձեր կենտրոնացած տեսողաշտում, յերևում են ձեզ ամենաընդհանուր գծերով, և այդ ձևով ել հարկավոր ե պատկերացնել նրանց կտավի վրա. կենտրոնականը, գլխավորը պետք ե լինի ճշգրիտ, վորոշակի, մնացյալ բոլորը ընդհանուր գծերով»*):

Նկարչի այդ ինքնաքննադատությունը, վոր վկայում ե նրա դիտավորությունների և կատարման մեջ տիրող վորոշ անհամաձայնության մասին, կլինեի արդարացի, չեթե այդ գործերին մոտենալինք նույն պահանջներով, վորն առաջադրում ե ինքը Սուրենյանցը. «արտահայտել կյանքը աշխատ, ինչպես վոր նա ներկայանում ե մեր աչքին»: Սակայն այդ «թերությունը» ինքնին կվերանա, չեթե Սուրենյանցի նկարներում չվորոնենք այն, ինչ վոր նա չեք կարող տալ իր ձրքի բնույթով, այլ նախնք նրա վրա միայն որնամենտ — գեկորատիվ տեսակետից, այս դեպքում մեզ, ժամանակակիցներիս. համար այն գնահատականը, վոր իր ժամանակ տվել եր Բեպինը Սուրենյանցի արվեստի մասին. այն ե՝ «որիզինալությունը տարրերնականության հասցրած, զսպվածությունը չորության հասցրած, բուռն սերը

դեպի մինչև իսկ հաղիվ նշմարելի մանրամասնությունները» — այդ գնահատականը թվում ե թի այժմ ել պահպանում ե իր ուժը:

Սակայն այս գնահատականը լրիվ չեք լինի, չեթե ֆորմալ մոմենտներին զուգընթաց մենք չարձանագրելինք և այն, ինչ նշանակություն ունի Սուրենյանցի նկարների մեջ այժմ ել անգամ մեզ՝ պատմական պրիզմայի միջից դիտող՝ ժամանակակից հանդիսատեսներին համար:

Սուրենյանցի գործերի մի վորոշ մասում անդրադարձել են գերիշխող դասակարգի — հայ բուրժուազիայի տրամադրություններն ու գաղափարները: Այդ կողմից նրանք են ու կմնան վորպես եպոխայի փաստաթուղթ: Իսկ չեթե ուշագրություն առնենք այն հանգամանքը, վոր Սուրենյանցը հայ նկարիչներից համարյա միակն եր, վորի ստեղծագործության մեջ անդրադարձել են այդ գաղափարները, այդ դեպքում Սուրենյանցի հիշյալ գործերը ել ավելի նշանակություն են ստանում և իրավունք են տալիս ուշադիր լինելու դեպի այն:

ԴՐԱՄԲԱՆ

*) Новое Обозрение, 1902 г. № 61/2

Վ. Յ. ՍՈՒՐԵՆՅԱՆՅԻ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(Գրեց Գևորգի Բուր՝ ՅՈՒ. ՅԱ. ՍՈՒՐԵՆՅԱՆՅԸ)

Իմ յեղբայր Վարդգեսը ծնվել է 1860 թ. փետրվար ամսում, Ախալցխա քաղաքում: Յես նրան հիշում եմ միայն պատանեկութան ժամանակ, վորովհետև նա ինձնից 10 տարով մեծ էր: Մորս և յեղբայրներիս պատմելով՝ նրա մեջ արդեն 3 տարեկան հասակից նկարելու հակումներ եյին նշմարվում:

Յերբ 7 տարեկան դարձավ. ծնողներս տեղափոխվեցին Սիմֆերոպոլ բնակվելու: Այստեղ, Դրիմում չեղած ժամանակ, նա Հ. Կ. Այվազովսկու ընտանիքի հետ միասին ուղևորութուն կատարեց դեպի Բախչի-Սարայ, ուր նրա վրա ուժեղ տպավորութուն թողեց հռչակավոր շատրվանը (ֆանտանը), վորի վրա բեռաված էր մնացել նրա ուշադրութունը:

Տուն վերադառնալուն պես, նա իր տեսածը անմիջապես նկարեց մատիտով, և այնքան մանրամասնորեն, վոր Այվազովսկին նրա վրա ուշադրութուն դարձրեց, նկարչական մեծ ապագա գուշակեց և առաջին ներկերը նվիրեց նրան:

Յերբ յեղբայրս 10 տարեկան դարձավ, նրան ուղարկեցին Մոսկվա, Լադարյան ճեմարանի գլխավորական դասընթացները: Այստեղ նրա նկարչական ընդունակութուններն չերևան յեկան ել ավելի ցայտուն կերպով:

Նա նկարում էր ծաղրանկարներ ուսուցիչների, աշակերտների վերաբերմամբ, պատրաստում էր ղեկորացիաներ աշակերտական ներկայացումների համար: Մի անգամ նա բավականաչափ հաջող կերպով նկարում է Լադարյան ճեմարանի գլխավոր Դելյանովի ծաղրանկարը: Այդ բանի համար նրան խիստ հանդիմանութուն են անում, բայց և ուշադրութուն դարձնում նրա վրա: Մանկավարժական խոր-

հուրդը վորոշում է միջնորդել, վորպեսզի չեղբորս փոխադրեն նկարչական դակագործական և ճարտարապետական դպրոցը (Училище живописи, ваяния и зодчества) և հաջողացրին նրա համար Լադարյան ճեմարանից թողակ:

Այդպիսով գլխավորական դասարանները դեռ չավարտած, չեղբայրս 16 տարեկան հասակում անցնում է նկարչության դպրոցը: Այստեղ չես նրան հիշում եմ շատ լավ: Մենք ամբողջ ընտանիքով տեղափոխվել եյինք Մոսկվա: Յերեք տարի մնալով նկարչության դպրոցի ճարտարապետական բաժանմունքում, նա, 1879 թվին, մեծ չեղբորս, բժիշկ Սուրենի աջակցությամբ, — վորը հենց նոր էր ռուսումը վերջացրել արտասահմանում, — տեղավորվում է Մյունխենում և մտնում այնտեղի ակադեմիան: Իր ռուսումը շարունակելու միջոցներ չունենալու պատճառով, նա սկզբնական շրջանում ստիպված էր ուսուերին և հաշերին լեզուները դասեր տալ: Հետևյալ տարին նա աշխատում էր Fligende Blätter ժուռնալում: Մի քիչ դրամ չատ գցելով, նա ուղևորութուն է կատարում Իտալիայում, վորտեղից բերում է իր հետ բազմաթիվ ետյուդներ, ցուցադրում այն աշակերտական ցուցահանդեսում և ունենում մեծ հաջողութուն, վորն առիթ է տալիս իր պրոֆեսոր Կաուլլերախին նրա մասին նամակ գրելու Մոսկվա՝ շնորհավորելով և լավ գնահատական տալով նրա ընդունակութունների մասին:

1885 թվին յերայրս ավարտում է ակադեմիան և վերադառնում Մոսկվա: Արտասահմանում մնալը վոր միայն հնարավորութուն է տվել նրան ավարտելու իր գեղարվեստական կրթութունը, ինչպես ակադեմիայում սովորելով, այնպես ել յեվրոպական գեղարվեստի ստեղծագործութուններին ծանոթանալով և ուսումնասիրելով նրանց թանգարաններում և ուրիշ տեղերում, այլ և նպաստել է նրա ընդհանուր կրթության ավարտման գործին:

Բացի դրանից, յեղբայրս ընդունակութուն ուներ լեզուները շուտ յուրացնելու: հայերենից և ռուսերենից դատ նա կատարելապես տիրապետում էր անգլիական, իտալական,

խաղանական, գերմանական և պարսկական լեզուներին: Առաջինից նա ունի մի շարք թարգմանություններ. Շեքսպիրից—Լիր արքան, Հուլիոս Կեսարը, Ոթելլոն, Համլետը, Անսանձի սանձհարումը: Վերադառնալով Մոսկվա, նա այստեղ լերկար չի մնում: Դեպի Արևելքն ունեցած հետաքրքրությունը, վորով բնորոշվում է նրա ամբողջ հետադա նկարչական գործունեությունը, դրդում է նրան դեպի այնտեղ ձգտելու, վորը և նա իրագործում է լեղբայրների և քույրերի նյութական աջակցությամբ, միանալով Պարսկաստանում գործող պրոֆ. Ժուկովսկու գիտաբանական շրջանակներին: Միջոցառումներ են իրականացվում Կասպար Եյզլերի և Լազարյան ճեմարանի պրոֆ. Միրզաշահարի ուղեկցությամբ: Մոտ 2 տարի մնալով Պարսկաստանում, գլխավորապես Իսպահանում, նա վերադառնում է Մոսկվա, բերելով այնտեղից իր հետ բազմաթիվ աշխատություններ, ինչպես ետյուդներ, եսքիզներ, այնպես էլ մեծ կտավներ: Առաջին անգամ նա ցուցադրում է նրանց «Պերեդվիժնիկների» միություն ցուցահանդեսում, ընտրվում է այդ միության անդամ, և մնում է իբրև այդպիսին մինչև իր կյանքի վախճանը:

1893—95 թվականներին յեղբայրս ապրում էր Եջմիածնում, վորտեղ նա Գևորգյան ճեմարանում ավանդում էր գեղարվեստի պատմության դասընթացը: Ահա այդ ժամանակ էլ նա ընդորինակել է Եջմիածնի տաճարի ներքին զարդարանքների պատճենները, վոր կազմում էր 130 թերթից բաղկացած մի ալբոմ, պատմական գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող, վորն այժմ հայտնի չէ, թե վորտեղ է գտնվում Եջմիածնից վերադառնալով Մոսկվա, յեղբայրս յերկար չի մնում այստեղ և 1897 թվին ճանապարհորդելու յե գնում: Իսպանիա: Արդյունքը լինում են ետյուդներ ու նկարներ, վորոնցից մի քանիսը դրվել են ցուցահանդեսում:

Առհասարակ պիտի ասել, վոր յեղբայրս իր կյանքի խոշորագույն մասն անց է կացրել ճանապարհորդության մեջ: 1897 թվի վերջում և 1898 թվի սկզբում, հրատարակիչ Կենքելի պատվերով, նա պատրաստում է Պուշկինի «Բախ-

չիսարայի շատրվան»-ի նկարները: Այդ միանգամից ընդհանուր ուշադրություն գրավեց նրա վրա և նրան հաջորդիվ դարձրեց:

Տալով յեղբորս կենսագրությունը, ավելորդ չեմ համարում հիշել նույնպես այն հարաբերությունները մասին, վոր նա ուներ հայ հասարակության զանազան ներկայացուցիչների հետ: Գեղարվեստի ասպարիզում նա մտերմական հարաբերություններ էր պահպանում բանաստեղծ Ծատուրյանի, կոմպոզիտոր Սպենդիարովի, նկարիչ Թադևոսյանի, Հով. Թումանյանի և ուրիշների հետ: Սպենդիարովի հայտնի «Այվարդ» ռոմանսը, վոր կազմված էր Ծատուրյանի խոսքերից, դրեց նրան պատրաստելու այդ թեմայի նկարը: Եսքիզը: Այդ եսքիզն այժմ հայտնի չէ, թե վորտեղ է գտնվում. բայց նրա բովանդակությունը յես լավ հիշում եմ. յերիտասարդ յերգիչը վարդ է մատուցում մատաղ կույսին: Ավելի ուշ—1907/1908 թվին, հենց այնտեղ Մոսկվայում, մորս բնակարանում, յեղբորս գալու միջոցներին, հաճախ նրա մոտ էին լինում Ծատուրյանը և Սպենդիարովը: Յեղբայրս համոզում էր վերջինիս ոպերա գրել Հայաստանի անցյալից առնված սյուժետով: Յեվ իբրև հարմար նյութ, նա մատնանի էր անում Թումանյանի պոեմայի նյութը: Վորպեսզի առաջ մղե և վոգևորե Սպենդիարովին, յեղբայրս—Վարդգեսը—պատրաստեց նույնիսկ գեղարվեստների բալետ—Վարդգեսը—պատրաստեց նույնիսկ գեղարվեստների բալետները, գործող անձանց հագուստները, ի թիվս վորոնց նաև Ալմաստինը: Յեվ այդ իսկապես վոր համակեց և վոգևորեց Սպենդիարովին: Նրանք յերազում ելին տեսնել «Ալմաստը» նրա գեղարվեստական ձևավորությամբ, սակայն ինչպես վոր յեղբորս չհաջողվեց ապրել մինչև այն ուր, յերբ կարող կլինեի մասնակցել նրա ներկայացմանը, այնպես էլ իրեն Սպենդիարովին չվիճակվեց լսել նրա կատարումը բեմի վրա:


1900 թվին Վարդգեսը հրավիրվեց Մարիինսկի թատրոնը, վորտեղ նրան հանձնարարվեց պատրաստել «Կորսար» բալետի համար գեղարվեստներ: 1904 թվին նա հրավիրվեց Գեղարվեստական թատրոնը պատրաստելու Չեխովի բարե-

փոխված «Զայկա»-ի ղեկորացիաները: Այդ նույն թատրոնի համար միևնույն տարին, 1904 թվին, նա պատրաստում է Մեռերլինկի — «Կույրերը», «Անտեղ ներսում» և «Անկողնը» մի արարվածով պիեսաների ղեկորացիաները: Այդ ներկայացումը, ինչպես հայտնի է, հաջողություն չունեցավ, բայց ղեկորացիաները արժանացան Ս. Գլազովի և մյուս քննադատների գովասանական ունեցնող խաներին, վերջը հետո — 1905 թ. Վարդգեսը մշտապես տեղափոխվում է Լենինգրադ ապրելու:

1912 թվին Մյունխենի ակադեմիայի հարյուրամյակի առթիվ չեղբորս, իբրև աշխատողի նախկին աշակերտի, հրավիրում են մասնակցելու ցուցահանդեսին: Նա աշխատելու ցուցադրում է իր խոշոր աշխատությունները մեկը — «Մալոմին», վորը հետագայում ցուցադրվում է Վենետիկի Միջազգային պատկերահանդեսում 1914 թվին: Համաշխարհային պատերազմը դրդում է նրան գալու Կովկաս: 1915/1916 թվականներին ձմեռը նա անց է կացնում Եջմիածնում, վորտեղ պատրաստում է Վանեցի գաղթականների ետնուհանդիսներին: Նույն տարին նա աշխատում է Յալտայի հանգստության չեկեզեցունկարադարձման եսքիզների վրա Դուկասյանների պատվերով: Այդ աշխատանքը նրան հանձնված էր դեռ 1908 թվին. պատվեր տվողները հետո, սակայն, դերադասեցին տալ մի ուրիշ նկարչի, իսկ 1914 թվին նորից դիմեցին չեղբորս:

Վերսկսելով այդ եսքիզների կատարման աշխատանքը և ավարտելով նրանց, չեղբայրս 1917 թվին մեկնում է Յալտա նկարադարձումը կատարելու: Նա այնքան ելցանկություններ աշխատելով գնալու, և ասում էր, վոր ամենին չէր գնա, չեթե պատվեր տվողները չպնդեցին:

Այլևս մենք նրան չտեսանք: Նա վախճանվեց Յալտայում 1921 թվին ապրիլի 7-ին և թաղված է այն չեկեզեցունդրսի կամարներից մեկի տակ, վորի նկարադարձման վրա նա աշխատում էր:



Կ Ա Տ Ա Ն Ո Պ

1881 թ.

- | | | |
|----------------------|----------|-------|
| 1. Կոլլեոնիկի արձանը | ձր. թ. 2 | 4×14 |
| 2. Վենետիկ — ջրանցք | ձր. թ. | 25×15 |

1885 թ.

- | | |
|--|-------|
| 3. Պարսկական տան ճակատ Զուլֆալում յուղ. կտ | 37×28 |
|--|-------|

1887 թ.

- | | | |
|----------------------------------|-----------|-------|
| 4. Գյուղացի աղջիկ | յուղ. կտ. | 26×18 |
| 5. Հարմում | յուղ. կտ. | 15×32 |
| 6. Պարը հարմում | յուղ. կտ. | 45×32 |
| 7. Շահի հանդիսը (չավարաված գործ) | յուղ. կտ. | 48×71 |

1888 թ.

- | | | |
|--|-----------|--------|
| 8. Աղամյանը Ոթելլոյի դերում | յուղ. կտ. | 24×14 |
| 9. 6 զանազան նաբբոսկաներ Աղամյանից մատ. թ. | | |
| 10. Սերենադ | յուղ. կտ. | 48×40 |
| 11. Առանդում | յուղ. կտ. | 117×44 |

Ճամբորդական եսյուզներ Պարսկաստանից

- | | | |
|-------------------|-----------|---------|
| 12. Յերկու պարսիկ | յուղ. կտ. | 24×34 |
| 13. Շուկա | յուղ. կտ. | 28×19,5 |
| 14. Փողոց | յուղ. կտ. | 28×20 |

1892 թ.

- | | | |
|----------------------|-----------|-------|
| 15 Յեզիպուտհի ետնուղ | յուղ. կտ. | 28×20 |
|----------------------|-----------|-------|

1893—94 թ.

- | | | |
|---------------------------------------|-------|-----------|
| 16 «Յեկալք առ իս ամենայն վաստակավորք» | դ. թ. | 43,5×15,5 |
|---------------------------------------|-------|-----------|

1895 թ.

17. Վոստանակոխ լեղած սրբավայր յուղ. կտ. 112X89

1897 թ.

18. Հոփսիմեյի վանքը յուղ. կտ. 81X150

ձամբորդական ետյուղներ Իսպանիայից

19. Բարսելոնա յուղ. կտ. 22X14
20. —, — յուղ. կտ. 22X14,5
21. —, — յուղ. կտ. 22,5X14,5
22. Վալենսիա յուղ. կտ. 23X14
23. Բարսելոնա յուղ. կտ. 23X14
24. Գրենադա յուղ. կտ. 21X14
25. —, — յուղ. կտ. 25X15

1897—1898 թ. թ.

Պուեկինի Բախչիսարայի շաքավանի իլլյուստրացիաները

26. Գրքի յերեսի նկար տ. թ. 40X30
27. Գիրքի յերես 12 տ. թ. 32X24
28. Իլլյուստրացիա յերես 24 տ. թ. 33X24
29. —, — —, — 37 տ. թ. 32X21
30. Մարիան Գիրքի հարեմում յերես 56 տ. թ. 43X30
31. Պուշկինը Բախչիսարայի շատրվանի մոտ. յերես 140 տ. թ. 29X28
32. Իլլյուստրացիա յերես 34 տ. թ. 33X24
33. —, — —, — 37 —, — թ. 31X23
34. Ջարեմ —, — 40 —, — թ. 33X20
35. Մարիա —, — 46 —, — թ. 35X17
36. Իլլյուստրացիա յերես 50 տ. թ. 46X33
37—45. Բնագրի մեջ ղեկողված 9 նկարներ տուղ թ.
46—67. Ջարդանկարներ:

1898 թ.

68. «Ձոն» Ս. Շահազիզի 35-ամյա հորեկանի առթիվ գ. մագաղաթ 25X8
69. Ս. Ժերմենի յեկեղեցին Փարիզում յուղ. կտ. 39X22

1900 թ.

70. Նատյուր մորտ ջ. թ. 28X16
71. Հելլա յուղ. կտ. 42X25,5
72. Սպասում ե յուղ. կտ. 37X26

1901 թ.

73. Իսպանիա յուղ. կտ. 71X44
74. Իսպանական պարունի յուղ. կտ. 51X38
75. Մոլլայի լեզը մզկիթից յուղ. կտ. 71X44

1905 թ.

76. Կանանց լեզը Անիի յեկեղեցուց յուղ. կտ. 107X133

1908 թ.

77. Սալոմե յուղ. կտ. 155X155
78. Ջարեմ Թագունու Թագադրությունը յուղ. կտ. 72X107
79. Ասպետ կին (Անիի պատմությունից) յուղ. կտ. 173X175

1911 թ.

80. Նկարչի մոր պորտրետը տեմ. թ. 24X17

1912 թ.

81. Նկարչի մոր պատկերը յուղ. կտ. 38X52

1913 թ.

82. Պարունի տեմ. կտ. 106X92

1914 թ.

83. Պարսից բանաստեղծ Ֆիրդուսին կարգում ե իր «Շահ-նամեն» շահ Մահմեդ 2-ին նկարի եսքիզը տ. թ. 29X29

1915—1916 թ.

84—105. Վանա հայ գաղթականներ տեմ. թ. 35X25
106—108. Նույնը գունավոր մտ. թ. 35X25
109—110. Նույնը մտ. թ. 35X25
111—115. Նույնը տեմ. կ. 35X25
116. Եղմիածնի ստրափնիկը տեմ. թ. 35X25

Կատալոգ Վ. Ս -ի ցուցահանդեսի—2

1918 թ.

117. Հարեմում տեմ. կ. 91×80
 118. Ս. Հոփսիմեյի վանքը—հայուդ—յուդ. կտ. 31×29
 119. Եջմիածնի վանքի զանգակատունը—հայուդ—յուդ. կտ. 32×28
 120. Գեղարդ — հայուդ. յուդ. կտ. 24×34,5
 121—125. Հայկական հեքյաթներ իլլյուստրացիան տ. թ. 20×20, 16,5×22, 15×30, 15,5×14, 20×10
 126. Իլլյուստրացիա «Շահ—Նամե»-ի տ. թ. 29,5×30,5
 127. Նուշնը տեմ. կ. 34,5×28
 128. Ռ. Մելիքյանի պորտրետ տ. թ. 24×23,5
 129. Ռ. Մելիքյանի «Բալլադ»-ի շապկանկարը տ. կ. 15×29
 130. Ռ. Մելիքյանի «Աշնան Տողեր»-ի շապկանկարը տ. կ. 13×31
 131. Ռ. Մելիքյանի «Հայ ժողովրդական լերդեր»-ի շապկանկարը տ. կ. 12×29
 132 Զատաավկա «Տարադ» ամսագրի տ. թ. 13×35
 133—138. Զատաավկաներ «Տարադ»-ին տ. թ. 8 17×12, 29
 139. Զատաավկա տ. կ. 12×29
 140. Ետյուդ յուդ. կ. 24×27
 141. Իլլյուստրացիա Ուալդի հեքիաթի համար տեմ. 30×32
 142. Ինքնանկար տ. թ. 15×13
 143. «Շամիրամը Արա գեղեցկի զիակի մոտ» 1899 թ. *) յուդ. կտ. 214,5×98.


*) Նկարը բերված է կատալոգը կազմելուց հետո

ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՅՈՒԿԻ ՄԵՋ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԿՐԺԱՏՈՒՄՆԵՐԸ

Յուդ	յուդանկար	տեմ	տեմպերա
կտ	կտավ	տ.	տուշ
Մտ	մատիտանկար	թ.	թուղթ
կ	կարտոն	գ.	գուաշ
Ջր.	ջրաներկ		

Այն թվանշանները, վերոնց մեջ տեղը × նշանը կա նշանակում է նկարի չափը սանտիմետրով. առաջինը՝ բարձրությունը, երկրորդը՝ լայնությունը:



Շտապի նկարը Տառատ Խաչվանքյանի, տպված է փոտ-լիտո-գրաֆիայով Պետերստի տպարանում.

Գլավիլիտ № 6817 (բ) Պատվեր № 4713 Տիրած 500





№ 26. «Բախչիսարայի զատրվան»-ի
ֆրեսկոպիս

Фрески к «Бахчисарайскому
фонтану»



«Гусей»



Испания




№ 74. Испанский цирюльник

Испанская танцовщица



№ 77. «Умиди»

«Саломэ»



№ 87. Նախորդի զանգեղ

Беженец-вакец



Լ. 104. Գաղթական վանեցի աղջիկ

Девушка из Вана



ՀՀ Ազգային գրադարան



NL0309323

